



ԵՐԾՈՒՒ

ՍԵՐՈՊՈՒՐԱԿԱՆ

ԹՈՒՈՒՅԵԱԼ ՀԱՅՐԵՆԱՍԻՐ ԹԵՒՕԷ
ՅԵՐԾՐՈՒՆԻ ՄԵՆԱՍՏԵՐԷՆԷ ՎԱՐԱԴԱՅ

ԽՄԲԱԳԻՐ ՀԱՅՐԵՆԱԽՈՐ
ՄԿՐՏԻՉ ՎԱՐԴԱՊԵՏ ԽՐԻՄԵԱՆ


ՀԱՏՈՐ ԼԵՐՈՐԻ

ՅՈՒՆԻՍ 1859 • ԹԻՒ 6 •

ՎԱՆՏՈՍԳ

Ի ՏԳԱՐԱՆ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԵՆ

ԴՎԱՐԱԳ



THE UNIVERSITY OF CHICAGO

LIBRARY OF THE UNIVERSITY OF CHICAGO

1892

8

CHICAGO, ILL.



ԱՐԺՈՒՒ

ՎԱՅՈՒՐԱՆՆԵՐ

ԹՈՒՅԱԼ ՀԱՅՐԵՆԱՍԻՐ ԹԵՒՕՔ
ՅԱՐԺՐՈՒՆԻ ՄԵՆԱՍՏԱՆԷՆ ՎԱՐԱԳԱՅ

ՈՐ ԴԱՆՏՈՍՊ

Գ • ՀԱՏՈՐ

1859

ՅՈՒՆԻՍ

Ա. ՀԱՆԴԵՍ ԱՍՏՈՒԱԾՊԱՇՏՈՒԹԵԱՆ

ԵՊԵՆՅԱՇԷՆ ՀԱՐՅՆ

ԱՆԱՐԻԱ ՀԻՐԱԿԱՅԻ ԹԵՌՈՒՐՈՍ ԲԹԵՆԱՒՈՐ ԵՒ ՄՈՎՍԵՍ

ԲԵՐԹՈՂ. ԲԱԶԱՐՈՒԵՍ ՀՈՆՏՈՐ Ի ՀԱՅՈՅ :

Ի միջին ժամանակս վեցերորդ դարու լիպյլեցան խմաստից առաւելութեամբ Աստուածարեալ հռետորքս երեքին լի հմտութեան ներքին եւ արտաքին մակաղութեան ի տան Արամայ՝ եւ անպարտելի ատելեան կացեալ Ս. Ե.

եգիտ զոր խնդրէրն : Լուր առեալ ապա « Թէ գտանի
 իմաստասէր ոմն Բաղմահմուտ 'ի Տրապիզոն քաղաքի , եկեալ
 'ի Կոստանդնուպօլսոյ Տիւքիկոս անուն Ռիւզանդացի-
 գնաց անդր եւ կացեալ առ նմա ամսութ՝ ուսաւ 'ի նմա-
 նէ զամենայն արտաքին իմաստութիւնս , մաշելով 'ի նոյն
 զկար զօրութեան իւրոյ » : Հայոց Պապման-Էտան Բ,
 յերէս 360 :

Բեղմնաւոր եւ ակազճուն գիտութեամբ դարձաւ 'ի
 հայրենին եւ 'ի մտի ունէր եւ եւսյր հոգով սերմանել
 զայնս ձրիապէս 'ի սիրտս հայկերան մանկտեաց : Բայց
 գտաւ երկիրս բովանդակ իբրեւ զծով մրկկայոյց ծփեալ
 յալիս գերութեանց եւ աւերմանցն սարակինոսաց եւ գինե-
 խնդիր սոնքսցելոցն յունաց . ոչ իշխան գտաւ իւր զօրա-
 վիգ եւ ոչ Թագաւոր կամ խորհրդական . յոյր սակս ըստ
 Քերթոզհօրն մեծի նստաւ 'ի լուութեան ընդ հովանեաւ
 հայրենեաց տան եւ տալով զանձն իւր յառանձնական
 աշխատութիւնս՝ արար քաղում լուսաւոր եւ ընտիր վար-
 դապետութեամբ իմաստալից գրեանս մանաւանդ բերա-
 կանական՝ ճարտասանական մաթէմատիքական եւ սատե-
 ղագիտական . որովք եւ ծանուցաւ յիւրում ժամանակի
 գերագոյն փիլիսոփայ եւ հռետոր քաջ ըստ գրեւոյ Գրիգորի
 մաքիստրոսի :

Սեծ հայրապետն Տ. Անաստաս՝ որ յայնմ ժամանակի
 կաթողիկոսութեան ունէր զբարձր աստիճան՝ իմացեալ եւ
 բանելոյս Անանիայ զամբաւ հմտութիւնն՝ առ իւր կոչէ զե-
 « անշարժ ըստ այլոց ազգաց դիպէ տումար եւ մերոյ ազգիս .
 զոր արայեալ մեծաւ ջանիւ . եւ մինչ կամէին ժողով հաստա-
 տել , զնոյն վախճանի սուրբն Անաստաս . անփոյթ եղեալ իրն
 զինի եկելոցն , այլ առաջին կարգաւ վարէին « Սահռէլ Անեյի :

շարսդրեաց երկայնաձիգ ճառս լուսաւոր վարդապետու-
թեամբ եւ հոգեորական բարձր հանդիսիւ . այսոցիկ ճառից
մասց խորութիւն՝ զարմացուցանէ զմիտս խորանկատ :

Որին եւս այս օրինակ ցանկալի կենօք կենցաղավարեալ
եւ բազում անմահ յիշատակս յերկրի թողլով, հանգչի
առ Բրիտոս : Որոյ պիտութեան բարի սերմանիք հազարա-
ւորս եւ բիւրաւորս բեղմնաւորեալ՝ ելից զՀայաստան եւ
հովանի արար ՚ի վերայ տանս Արամեան :

ՄՈՎՍԵՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԻԻՆՍԻՑ

Ոյն սա եւս ժամանակակից վերնոցն ծագկեցաւ ՚ի նմին
դարու հոգեորական արհեստիւ պերճացեալ եւ առաւել
եւս հայկաբանական հմտութեամբ . զի շարսդրեաց յա-
տուկ գիրս բերականաց եւ ճարտասանութեան . գեղգե-
ղեաց եւ բազում տաղաչափական բերթուածս . որոյ վասն
անուն րնկալաւ Մովսէս բերթող քաջ . մինչեւ այնքան՝
զի ՚ի միջին դարս բազումք զՊիտոյիցն գիրք Խորենացի մեծ
բերթողահօրն՝ սմին աշխատութեան պտուղ համարեցան :
Սա առատաբուղիս վարդապետութեամբ եւ անձանձիր աշ-
խատութեամբ վարժեաց բազում սոյակերոս ընտիրս եւ ըն-
ծաեաց զնոսին հայրենի տան հասունացեալ արտօրէից մշակ
Ժիր եւ անձնանուէր :

Իսկ ինքն զարմանալի առաքինութեամբ քաղաքավա-
րեալ՝ յալիս խորին ծերութեան գնաց լինել քաղաքակից
երանեղեաց սոյխարհին . որոյ ՚ի սէր յամենայն ՚ի կեանս իւր
կայր խաչաբարձ :

Յէջս պատմութեանց ազգային, գովութեամբ յիշատակի
իրից գերապոյն վարժապետացս ցանկալի անուն . որոց յի-
շատակ օրհնութեամբ եղիցի դարուց ՚ի դարս :

* * *

Թեանը համար գործածեց : Այսպիսի հայրենասէր Թագաւորի մը որչափ մեծ ցաւ էր երբոր կը տեսնար Թէ իր ազգբաղձալթիւ Թշնամեաց մէջ նեղութիւն կրելով կը չարչարուէր : որչափ կը զայրանար երբոր կը տեսնար Թէ այն ազգը որ մէկու մը բնաւ բռնութիւն յափշտակութիւն մը ըրած չլսելով ալ վայրենի եւ անօրէն սզգաց հարստահարութեանց եւ յափշտակութանց ենթակայ եղած էր : որչափ կը սրտմտէր երբոր կը տեսնար Թէ այն ազգը որ միայն իր երկիրը պաշտպանելով գոհ ըլլալով ուրիշներուն երկրին տէրութեանը վնաս մը հասցնելու չէր ախորժեր, այսու ամենայնիւ օտարները միշտ ոտնակոխ կնէին իր հայրենիքը գերութեամբ աւերութեամբ եւ զանազան հարուածներով : Ահա այսոնք տեսնելով, եւ ամէն Զանք ու աշխատութիւն յանձն ստնելով իր սիրելի ազգին համար իւր անձը դրաւ : եւ սկսեց պատերազմական մեծ պատրաստութիւններ ընել, ութսուն հազարի չափ զօրք ժողովելով եւ Գէորգ Մարգարեանիին գլու որդւոյն հետ միանալով, բուռն զօրութեամբ Թշնամեաց հետ անվեհեր բաջութեամբ պատերազմեցաւ, եւ վաճեց հալածեց զանոնք իր տէրութեան սահմաններէն :

Այս աշխարհաշէն Աշոտնէր՝ այն յաւերժայիշատակ պանծալւոյն Անի մայրաքաղաքին ընդ տրձակողը, որն որ առաջ սոսկ բերդ մըն էր : եւ իր ուսումնասիրութեամբ ու բարեպաշտութեամբ բաղձալթիւ ուսումնարաններ վանքեր եւ հոյակապ եկեղեցիներ կանգնելով վայելջութեամբ զարդարեց : փառաւորեց Հայաստանը, որ այն փառաց աղբիւրներուն յիշատակաց կաթիլները այսօրուան օրս բոլոր Հայկազանց այրեալ եւ ծարաւեալ սրտերը կը զովայնէ ու կը մխլթարէ : այն յիշատակները այն պատուական հնու-

հրապարակելով այսպիսի գործ մը յառաջ տանելու 'ի փա-
ռս Ատուրծոյ եւ 'ի պայծառութիւնն ազգին :

Տ. Կ. ԳԱԼՓԱԿՃԵԱՆ

ՀԱՆՐԷՍ ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹԵԱՆ ՍՈՒՐԲ ԴՈՒԿԱՍԵԱՆ ՎԱՐԺԱՐԱ

ՆԻՆՈՐ ՅԱՅԳԵՍՏԱՆՍ ՎԱՆԱՅ :

Չորս տարւոյ միջոց աւելի կար՝ որ բոլորովին դատրած էր
դպրոցական հանդիսի եւ հարցաքննութեան սիրելի ձայնը՝
ճշմարիտ ազգասիրացը ականջէն . բայց այն միջոցիս՝ արիա-
ջան հոգատարութեամբ Գ. Տ. Իգնատիոս Ազգախնամ
Առաջնորդի՝ կրկին արժարժեցիկ, մեծ տպաւորութիւն ու-
նեցաւ Վան քաղաքիս արդոյ ուսումնասիրաց սրտին վրայ .
անոր համար երբոր յուլիս 11 թիւ տոմսակներ տարածե-
ցաւ շատ մարդիկներու՝ թէ նոյն կիւրակէ առաւօտուն
Ս. Ղուկասեան Վարժարանի քննութեան հանդէսն պիտի
կատարուի, մեծաւ ջերմեռանդութեամբ շատ անկեղծ ազ-
գասիրաց բազմութիւն 'ի սուրբ Յակովբայ եկեղեցին դի-
մեց, ուր պատրաստուած էին դպրոցական 100 հատի չափ
մանկոք քննութիւն տալու համար :

Ո՛ր եհափաղ Տ. Իգնատիոս առաջնորդ Ս. Հօրը գալուստն
ըստնուն պէս՝ երգեցիկ մանկունք պայծառ հաղորձաւորք
եւ բաղքը երգերով դիմաւորեցին . որ միչեւ Ս. եկեղեցւոյ ա-
ռեանն ուղղակի գալով բազմեցաւ իւր ինքեան յատկացեալ
բաղմոցին վերայ : Այս միջոցին յառաջադէմ աշակերտին
մէկը ազդու եղանակաւ գեղեցիկ ճառ մի խօսելով՝ հան-
դէսն սկսեց :

Հայրենիքնիս :

Ասոր օրինակին հետեւելով միւս վարժարաններն եւս սիրով պիտի ջանան միշտ յառաջագոյն լինելու, ինչպէս որ արդէն սկսած են : Որքեսէր Հայրեն ալ իւրեանց որդւոց բարին լաւապէս որոշելով՝ ջանք թող ընեն շարունակ իւրեանց զաւակունքը դպրոց խրկելու . որ լաւապէս կրթութիւն առնելով, իրենց համար ցուպ ծերութեան, յիշատակ բարի եւ զաւակ օրհնութեան լինին, գովեալ յԱստուծոյ եւ ի մարդկանէ :

Դ. ՏԵՍԱՐԱՆՔ ՀԱՅՐԵՆԻ ԱՇԽԱՐՀԱՅ

ԿԱՐՄԱՐԱՌՈՐ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՂԱՆՔ ԵՒ

ՇՈՒՀԱՆԱՅ ԳԻՒՂ :

Ս ան քաղաքէն եօթն Մղոն հեռի՝ վարագ լեռան ալիւմտեան կողին վրայ շինուած վայելուչ դրիւք ծովահան յեաց Ազնիւ մենաստան մի է : Կսեն թէ Ս. Աստուածածին կարմիր հանդերձիւ այս բլրակիւ վերայ երեւնալուն համար, վանքն կարմրւոր անուն ստացած է :

Այս վանից ինչ ժամանակէ հիմնարկեալ լինելուն ճիշտ յիշատակագրութիւն մը չիկայ . ըստ որում իւր հին կոնկալն եւ յիշատակարաններն՝ ժամանակաց հնութեան եւ բարբառական տիրապետութեանցը զոհ եղած են : Բայց վերջապէս նորոգութեանը եւ բարեկարգութեանը համար տաճար

դիւնաւոր վանահայրս բնիկ Աստանդնուպօլսեցի է . բայց
 իւր հին հայրենիքն մեծ սիրով սիրելուն համար , քսան ա-
 մայ ժամանակաւ երկար համբերութեամբ եւ շատ վշտեր-
 րու եւ բարբարոսական հալածանաց տոկալով հրաշալի
 Ս. Վանկոյս նուիրական ճրագն 'ի վառ պահած է եւ կը-
 պահէ լին յուսով եւ հոգեւորական մխիթարութեամբ :
 Իւր փառահեղ ալիքն հիմայ եօթանասունէն խիստ վեր
 անցած է . բարութն հեզ եւ քաղցրաբան , հատուկ հիւրասէր
 արդարասէր եւ ուսումնասէր . գրաւոր զանազան աշխա-
 տութիւններ եւս ունի , որոնցմէ մէկ երկու կտոր բան
 թերթիս էջերով հրապարակել պարտ համարեցանք :
 Ս. անքս ունի նա եւ վար ու ցանի համար ընտիր արտեր
 եւ խոտաւէտ պետիւններ . որոնցմով կարէ վանից դարմանա-
 կան պակասութիւնն առաւելագէտ հոգացուիլ եթէ օրինա-
 ւոր կերպով մշակուին :

Մ. յս վանքիս արեւմտեան դռնէն քիչմը վար , հին եւ ան-
 ծանօթ շինուածոց հիմունքներ կ'ըմարուէին . որոնք ան-
 ցեալ տարի մէկ պատճառովմը բացվելով միջէն շատ
 հնութիւններ դուրս եկան . ինչպէս՝ զէնքի կտորվանք եր-
 կաթի մանրուք , տաշածոյ ընտիր քարեր , այս քարերուն
 շատին վրայ արուեստաւոր կերպով գծուած մանր բեւե-
 ռագիր կան խիստ մաքուր եւ պատուական . թէպէտ Վա-
 նայ բերդին վրայ եւս կայ բեւեռագիր՝ բայց ասոնց ազ-
 նուութեան եւ գեղեցկութեանը չեն կարեր համիլ : շա-
 յաստանին միջի այս հնութիւններ տեսնողին վրայ՝ յատկա-
 պէս զարմացում մը կուգայ՝ թէ այն հնութեանց դարու
 մէջ ինչ դարմանալի կերպով արհեստները պայծառացած են
 եղեր հայաստանի մէջ . ինչ սքանչելի ընտրողութիւններ
 ըրած են այն քարերուն տեսակին վերայ՝ որ իւրեանց աշխա-

տութիւնը հազարաւոր տարիներով անկորուստ անեղծ անե-
լի պահած են. աւանդ որ այս ճարտարութիւնն ՚ի վաղուց
հեռացած է հայրենի տանէս. չորս հարիւր տարուան խա-
չարձանի մը յիշատակարանն մեծ դժուարութեամբ կ'կար-
դացուի. ինչու որ՝ ոչ քարի ընտրութիւն եղած է եւ ոչ
գրչութեան. անոր համար գոռոտած փոտած եւ անվերծա-
նելի մնացած են շատեր. ասոնք նոյն բեւեռագրացը հետ թէ
որ չգիտցող մէկմը բալդատէ՝ անշուշտ պիտի հետեւցնէ
թէ այն խաչարձանները հազարաւոր տարիներով վերոգրեալ
բեւեռագրերէն յառաջ ժամանակաւ գծուած են :

Հառ երանելի կ'լինէր Արծաշոյ թերթերով այս բեւե-
ռագրաց ճիշտ պատկերն հրատարակել՝ բայց աւանդ որ
խղճալի Տպարանս շատ կարեւոր պիտոյբներէ զուրկ կը-
տառապի :

ՀՈՒՇԱՆԱՅ ԳԻՒՂ.

Կարմրաւոր վանքէն կէս մղոն հեռի է Հուշանայ գիւղն.
որուն համար աւանդութեամբ կսեն թէ Սենեքերիմ Արծ-
րունի թագաւորի Հուշանիկ արջիկան յատուկ զիւղն է եղեր
որուն գերեզմանը մինչեւ հիմայ մեծ եւ հին խաչարձա-
նով մը պատուած կ'մնայ. նոյն գիւղի մէջ եւ կսեն (Հուշան
խաթունի գերեզման) :

II. Գէորգ անուանով եկեղեցիմը ունի, տաճարն ամուր
կամարակապ. որուն ճակատի արձանադրութիւնն է այս :

ՀՆՈՐՀԱԻՔ ԲԱՐԵՐԱՐԻՆ ԵՒ ԿԱՐՈՂՈՒԹԵԱՄԲ ԱՄԵ-
ՆԱԶԱԻ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՈՅՆ ՎԵՐՍՏԻՆ ՆՈՐՈՒԵՑԱԻ ՍՈՒ-
ՐԲ ԴԵՈՐԴԻՍ ԴԹՈՒԱԳԱՆՈՒԹԵԱՆ ՎՅՈՑ ՈՂԹԻ
ԴՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՓԻԼԻՊՊՈՍ ԿԱՌՈՂԻՊՈՒԹԵՒ ՅԱ-
ՌԱԶՆՈՐԴԻԹԵԱՆ ՄԵՐՈՑ ԱՌՈՈՒՅՍ ԿԻՐԱԿՈՍ ՎԱՐ-

ԴԱՊԵՏԻ ԱՒԱՆՅԻՈՅ՝ ՈՐ ՇԻՆԵԱՅ ՍՈՒՐԻ ՏԱՃԱՐՍ ՄԻ-
ԱԲԱՆՈՒԹԵԱՄԻ ԳԻՒՂԻՍ ՏԵՐ ՅՈՎՀԱՆՆԵՍԻՆ ՄՈՒ-
ՐԱՏԻՆ, ԱՍԻՃԱՆԻՆ

Եամատունն փայտայարկ նորաշէն է մէկ քահանամբ
ունի որ գիւղիս հոգեւորական պաշտամունք մեծ ջերմեռան-
դութեամբ կ'կատարէ : 37 տուն հայ եւ մէկ տուն տաճիկ
բնակիչ ունի , որոնք երկրագործութենէն 'ի զատ ուրիշ
արհեստ չեն գիտեր . այգի բուրսատան տնկելու նոր ախոր-
ժակ մը մտածէ մէջերնին եւ օր ըստ օրէ կ'յառաջանայ :

• • •

Դ. ԲՈՒՐԱՍՏԱՆ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆՑ

“ Ի պարոյ բերանոյ առն . Լոյսի առնի իւր Բարոյնի մէջ ”

Առաջ ԺԲ . 14 .

Եւտեանամբ որ աշխարհս իւր մէջի ամէն բաներով միշտ
շարժման մէջ է . հողմն , օդ . եւ ջուր հաւասարակշռու-
թեան կը հետեւին , կենդանիքն բարօրութեան կը ցանկան ,
տունկերն անդամ աճելութեան եւ կատարելութեան կը
բաղձան . ինչու որ՝ բնութիւն այնպէս սահմանած է :
Այս եւս յայտնի բանէ որ՝ Աստուած ամէն բան բարի
ըլլալու համար ստեղծեց ու բարութեան մէջ ալ զբաւ
որ մինչեւ յաւիտեան 'ի բարութեան շարունակին : Բայց
մարդն յատուկ մէկ ստեղծուած մը լինելով՝ բանականու-

Թեան բարի սերմն սերմանեց անոր սրտին մէջ, պարգեւեց նա եւ անձնիչիսան կամք որ նոյն բանական ոգւոյ զօրութեամբ ինքն իւր բարին ընտրէ : Երկրագործ մը կը սերմանէ իւր սրտն անկէց արդիւնաւոր պտուղներ ընդունելու համար : մի Թէ Աստուած չպիտի խնդրէ իւր սերմանած բանականութեան բարիքն, այո՛ կը խնդրէ՝ որովհետեւ սերմանելոյ վախճանն հնձելն է . կը կամենայ ժողովել որ կրկին այն բարի պտուղն 'ի մեզ դարձունէ : Բանականութեան տղաբիւր բերանն ըլլալով՝ այն տեղէն կը բուսնէ բանականութեան պտուղ . որն որ մարդոյս երջանկութեան եւ Թշուառութեան պատճառ կըլլայ : Ար տեսնա՞ս երբոր մէկը իւր Թշնամոյ հետ քաղցրութեամբ խօսէ՝ այն ժամանակ աւոր բորբոքուած հուրը խկոյն կըշիջանի . եւ այն ալ փոխանակ չարիքներ հասցունելու՝ շատ անգամ եղեր է որ՝ պարգեւած է շատ բարիքներ :

Ահա այս այն մարդն է՝ որ Դաւիթ մարգարէն կսէ
 « Եւ եղիցի նա որպէս ծառ որ տնկեալ է 'ի գնացոյ Զուրց :
 Ար զգտուղ իւր 'ի ժամու տայէ », եւ տերեւ նորա մի
 Թափեացի » Սաղ Ա, 3 : 1-5

Տեսած ես՝ որ բարեպաշտօն անձն, որ 'ի Հոգին սուրբ ապաւինած է՝ եղեր է որ տկարանայ իւր հակառակորդի առաջ քաւ լիչի . ինչու որ՝ Բրիտանիայն այն խօսքն կը զօրացուցանէ զինքն, որ կսէ » Այլ յորժամ տանիցեն զձեզ 'ի ժողովուրդս եւ 'ի պետութիւնս եւ յիշխանութիւնս մի հոգայցէք՝ որպէս Թէ զինչ պատասխանի տայցէք կամ զինչ ասիցէք : Զի հոգին սուրբ ուսուսցէ ձեզ 'ի նմին ժամու զինչ պարտ իցէ խօսել » : Դաւ . ԺԲ . 11 :

Առաքեալներ որ տգէտ եւ անկիրթ մարդիկ էին, կը տեսնա՞ս միանգամայն Թագաւորներ եւ իմաստնաճօն մար-

դիկ ատիրաբերան կլային անոնց առաջ . ինչու որ Հոգին սուրբ անոնց սրտին մէջ բնակած ըլլալով՝ կը զօրացուցանէր անոնք : Մի թէ նոյն սուրբ Հոգին բնակած չպիտի մնայ ընդ հանուր հաւատացելոց մէջ՝ այո՛ նոյն ինքն վկայեաց ասելով . « Եւ ես աղաչեցի զհայր, եւ այլ մխիթարիչ տա-
ցէ ձեզ՝ զի ընդ ձեզ բնակեացի 'ի յաւիտեան : ԶՀոգին ճշմարտութեան զոր աշխարհս ոչ կարէ, ընդունել զի ոչ տեսանէ զնա եւ ոչ ծանաչէ զնա . բայց դուք ծանաչէք զնա, զի առ ձեզ բնակեցցէ եւ ընդ ձեզ եղիցի 'ի յաւի-
տեան » 3ով. ԺԴ. 16 :

Նոյն հոգին էր որ Ղեւոնդ երկցուն եւ քաջին Վարդանայ մամիկոնէի բարբառել կուտար, որո՛ք սքանչելի վարդապետութեամբ կը քաջալերէին հոգեւորական սիրով՝ ընդ դէմ գնել հրապաշտ աղգին Պարսից . որ Հայաստան ու հայրենի կրօնք կենդանի մնայ : Արդարեւ չէ թէ միայն անոնց անձինք բարութեամբ լեցուեցան՝ հապա անոնց բերանոյ բարի պտղով ընդ հանուր հայաստանը փառաւորուեցաւ . որ մինչեւ հիմայ ալ կը վայելէ նոյն բաղքը ծաշակ :

Ուրեմն Սողոմոնի « 'Ի պտղոյ բերանոյ առն՝ լոցի անձն իւր բարութեամբ » ճշմարիտ է եւ բնաւին կատարեալ : Ապա ի՞նչպէս կլլայ որ փոխանակ բարի պտուղ բերելով՝ փուշ բուսցնէ : Աստուած բանականութի տուաւ մարդուս երջանիկ ըլլալու համար, չէ թէ թշուառական . բայց աւանդ մարդը բարիէն փախչելով՝ թշուառութեան կը ցանկայ . այն բերանը որ բարութեան է աղբիւր, թշուառութեան գործիք կը դարցունէ, փոխանակ օրհնութեան կանխածանէ զեղբայրն, որ Բրիստոս կսէ « Օրհնեցէք եւ մի անխժանէք » : Ապա ի՞նչ կնէ որ իւր նախանձ ոգւոյ կամքը կատարուի, կը բամ-

բասէ . կը թշնամանէ , կը հայհոյէ . կանարգէ եւ շատ տեսակ
զաղիր խօսքերով եղբօր սիրտը կ' ծակոտէ . տե՛ս Բրիստոս
կրկին ի՞նչ կը պատասխանէ « Որ բարկանայ եղբօր իւրում
տարապարտուց , պարտաւոր լիցի դատաստանի . եւ որ ասի-
ցէ ցեղբայր իւր մօրոս , պարտաւոր լիցի գեհնէնին հրոյ »
Մատ , Լ . 22 :

Լ . 20 պատիժներս անտարակոյս կ'նդունէ չարախօս բե-
րանը փոխանակ բնական բարութեան : Մարմնոյ թշուա-
ռութիւնն ալ յայտնի է որ՝ շատ անգամ իւր լեզուէն կը
ծնանի : Ափսո՛ս որ գործի բարութեան ստեղծուածն՝ գոր-
ծի չարութեան կընեմք :

Ուրեմն բերան որ բարութեան է աղբիւր՝ պէտք է որ
միշտ դէպ իբարին շարժել Բնաւին չիտալ տեղի զաղիր
խօսքերու . որ երեւակայութիւնն սուրբ մնալով՝ անտարա-
կոյս անդրաւելի բարութիւն պատրաստած կլլայ . եւ ըս-
կզբնական մարդն անձառելի փառօք կը փառաւորուի :

Ա . Գ . Աշակերտ . Ժառանգա-
ւորաց Վ . Վարդապ :

ԱՌԱՅ

Աղուէն է - Գայլ

Լ՛ղուէն խաբուսիկ իսօվոյ տանջեալ ,
Շրջէր ի դաշտի տըխուր վարանեալ .
Յանկարծ ծեր դայլոյ ումնմն հանդիպէ ,
Նենգ չար խորհրդով զգայլն խաբէ .

Եկ, աւէ, եղբայր լիցուք մեք ընկեր
 ջինչ եւ գրտանեմք ուտել միատեղ .
 Դաշինքս եղին երդմամբ հաստատուն,
 Ի շէնքս յանշէն յածել ցերիկուն .
 Աղուէսն հաց պանիր Գայլն միս խողին,
 Բերեալ զիգլեցին համբարատեղին .
 Խրատ ազա տայր Աղուէսն ընկերին .
 Թէ ինձ երեւի ամբարք պակասին .
 Դարձցուք միւսամբամ ժողովել կրկին .
 Բերել մեզ պարէնս ըստ բաւականին .
 Անխոհեմ Գայլուն 'ի լըսել զայս բան,
 Ընթացաւ փութով զառաջնոյն նման .
 Իսկ Աղուէսն նենգող ժողովեալ զամէն,
 Տարեալ իւր կորեանց զընէր 'ի պարէն .
 Այսպէս մի խաբիք շողըբորդ լեզուաց,
 Անփորձ անծանօթ նորատես մարդկանց .
 Մեծ զգուշութիւն պիտին քեզ առ այս .
 Չի մի կրեցես Գայլուն ըզլնաս .

Ալլա-իւ 3. Ալլա-իւ Ժառան
 Գա-որայ 4. Վարդայ *

ՄԱՅՈՒՆԻՍ ԵՄՄԱՆՈՒԼ ԵՄՄԱՆՈՒԼ ԵՄՄԱՆՈՒԼ
 ԱՌԱԿ

Զա-ի-Թու-նա

Ժողով կազմեալ Թու-նոց երամ
 Խորհուրդ առնեն 'ի մեջ իւրեանց *

Թէ՛ Աստուած ըզմեզ Թեւօք արար

Նոյն ինքըն տէր Թէ կամենայ

Յօդըս ելցուք ճախրել ընդ այն :

Ինքնահաւան հաւն այն նկուն

Իւր յուսալով ըզթեւ չնչին

Գողողութեամբ պատասխանեաց

Դէմ աշխարհի եւ Աստուծոյ :

Աստուած կամի Թէ չկամի

Ես Թռանիմ յառաւօտեան :

Այս բանք հաւոյն ամբարտաւան

Անէծք եղեն իւր պատժական,

Ձի ոչ յուսաց յԱստուած անհուն

Այլ յիւր զթեւն փետրովք զեղուն :

Վասն այն տկար որպէս սողուն

Մնաց անզօր վերայ հողւոյն :

Այս առակէս ուսիր խրատ

Հաստատ յուսով լեր առ Աստուած

Իսկ եթէ սոսկ յուսաս քո անձ

Նման հաւոյդ լինիս առակ :

Մ. Միրեւ. Հ.

Ե. ԹԱՆԳԱՐԱՆ ՀԱՅԿԱԶՆԵԱՆ ԴԳՐՈՒԹԵԱՆ

ՕՐԻՆԱԿ ԳՐԶԱԳԻՐ ԱՐԵՏԱՐԱՆԻՆ ԿԱՐՄԻՐՈՐԱՅ ՎԱՆԻՑ :

- ” Ըաւրհնութիւն հաւր անսկզբնականին դոհութիւն որդւոյ
” Լոյ միածնի յառաքանութիւն ճշմարիտ սուրբ Հոգւոյն

" Երիցն 'ի մի հաւաքումն որ արժանադոյց զտրուպ գրիչս
 " 'ի նստահանդիստ Չ. Ծ. Ա. Թուականութեան Հայկա-
 " զեան տուժարիս 'ի Հայրապետութեան Տեառն Գրիգոր
 " ըոյ հայոց վերադիտողի եւ Վաթուղիկոսի, 'ի ժամանակս
 " Ղազան զանին որդւոյ Աղունին, գրեցաւ չորեքտառեան
 " Աստուածաբան եւ Բրիստոսաբարոզ հրաշազան մա-
 " տեանքս ձեռամբ Սերորի տրուպ գրչի եւ անարժան
 " ունելոյ զաստիճան քահանայութեան.

Յիշատիւրան Ընդնայ գիշի գրչագիր Տէ Ա-Էփարանի :

" Արդ գրեցաւ սուրբ Աւետարանս 'ի յեր-
 " կիրս Մովսէս 'ի վանքն սուրբ Գէորգայ զօրավարին յա-
 " ռաջնորդութեան Ս. ուխտիս Յովսէփ վարդապետի եւ
 " 'Աէրսէս եպիսկոպոսի եւ տէր Դաւիթ հայրապետի 'ի
 " Թիւ հայոց Ռ. Թ. ձեռամբ ամենամեղ եւ եղկելի ա-
 " վաւ ածին եւ փծուն գրչի Իգնատիոսի :

" Եւ արդ՝ ես անկարգս 'ի կարգաւորաց անարժանս
 " յարժանաւորաց անպէտս յընտրելոց մեղաւորս յարդա-
 " ըոց, որ սակս զանազան մեղաց իմոց վիրաւորեալ եմ՝ զհո-
 " գիս իմ :

" Ո՞վ դիւրակործան մարմին երկրածին որով աղագաւ
 " աւաղեցից զբեզ ստացական եթէ մտածական՝ զկամայից
 " եթէ զակամայից. ո՞վ եւ վայ ինձ 'ի Թիւս հազարաց. կող-
 " կողագին դիմաւք յերեսանկեսլ զձեղ աղաչեմ ո՞վ ընթեր-
 " ցողք եւ լսողք յիշեցէք 'ի սուրբ եւ յերկնաբացիկ յա-
 " ղօթս ձեր զստացօղ սուրբ տառիս տէր յովհաննէս մահ-
 " դասին եւ եղբայրն զՍուլտան խօճէն, զՍտեփանոսն . . .

(156)
 „ Դարձեալ անմեղադիր լերուք վասն զի յոյժ դառնու
 „ թեամբ եւ շտապով գրեցի . չքահանայ մի հերետիկոս
 „ Պրակտիկա չարսէն անուն մատնեաց զիս յայլազկեաց
 „ եւ ես անհիւ եւ վախստական էի . մինչ որ աւարտեցի :
 „
 „

ՏԱՂ

Ի Կարմրուոր Սուրբ Աստուածաբան :

Բազում դատերք նախնի կարի մեծացան ,
 բայց դու յոյժ անցուցեր գէր բան զամենայն .

Ո՛հ Կարմրուոր հրաշալի
 Անեղին իսկ աթոռ տեղի հանգստեան ,
 զոր տեսանողքն կանխաւ սու մեզ խօսեցան :

Ո՛հ Կարմրուոր հրաշալի
 Բարունեաց գեղ պսակ երկնից բուրաստան ,
 ի քեզ պարբ հրեշտակաց զմայլեալ ցիծան :

Ո՛հ Կարմրուոր հրաշալի
 Դարուց յանցաւորաց տառքդ անսահման :

Ի հանգիլ թւոց ահեղ դատաստան ,

Ո՛հ Կարմրուոր հրաշալի :

Ուրանոր դու միայն միջնորդ անշեան :

Աղաթիչ վրկիչ որոց քեզ յուսան :

Ո՛հ Կարմրուոր հրաշալի :

Ղօղեալ ի մենաստան քոյ սուրբ անուան ,

յալեաց 'ի յալիս կեանք իմ սպառեցան,

Ո՛հ Կարմրւոր հրաշալի :

Իտունկս բանաւոր անբիծ աղաւնի,

եկ տարիալի նու շօրն երկնաւորի.

Ո՛հ Կարմրւոր հրաշալի :

Մայր իսկ վեհագոյն նոր Սողոմոնի.

յաւուր սարսափելի խնամքըդ ինձ հասցի.

Ո՛հ Կարմրւոր հրաշալի :

Ի՛նչ բուրլառ ոսկեղէն սուրբ Երրորդութեան
անձնապատան եմ քեզ սցծմ եւ յաւիտեան.

Ո՛հ Կարմրւոր հրաշալի :

Իբացե 'իրաց սահեցեալ գնայ.

երգողիս կեանք Տէր Բարդուղիմեայ.

Ո՛հ Կարմրւոր հրաշալի :

Խօթանասնեկի կեանք իմ բոլորի.

մնամ ես անձկով 'ի հող տապանի.

Ո՛հ Կարմրւոր հրաշալի :

ՔԱՐԴՈՒՂԻՄԵՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՌԱՋ-

ՆՈՐԴ ԿԱՐՄՐԱՒՈՐ ՎԱՆԻՑ :

ՄԵՃՆ ՍԴԷՊ ՄԱՅԻՆԵԱՆ

Թագ փառաց մերոց այր ցանկալի

Ղոհար անգին գանձ գովելի.

Միշտ 'ի հոգիս սէր քո վառի.

Սեճ նախարար Մամիկոնեան

(158)

Սուր սայրասուր Սմբատ իշխան
Առիւծդ արի անպարտելի,

Ե՛կ Ե՛կ սէր իմ :

Ըշխարհ ճենաց ամպ անաղին
Փայլատակեաց շանթ հրածին.

Քաջն Մամիկոն վեհ քո նախնին

Մեծ նախարար Մամիկոնեան

Սուր սայրասուր Սմբատ իշխան

Առիւծդ արի անպարտելի

Ե՛կ Ե՛կ սէր իմ :

Միհրան իշխան օձ բնածին

Քեւ ընկալաւ մահ գառնադին.

Դու հաստատիչ սղգ Հայկազին.

Մեծ նախարար մամիկոնեան

Սուր սայրասուր Սմբատ իշխան

Առիւծդ արի անպարտելի.

Ե՛կ Ե՛կ սէր իմ :

Ընդհանուր (ԲՆՆԱՆՔԱՐ) քո սուր տէգ բոցեղէն.

Տապաստ յերկիր արկ զՍուրէն

Իշխան զօրուն պետն անօրէն.

Մեծ նախարար մամիկոնեան

Սուր սայրասուր Սմբատ իշխան

Առիւծդ արի անպարտելի

Ե՛կ Ե՛կ սէր իմ :

ԳԱՅԼ ՎԱՀԱՆ ԻԶԽԻՆ ՄԵԺ

Նեա Թափանցիք սուսեր հատու երկբերան .
Խայթոց մահու ահեղ գնդին պարսկական .
Ուր է հնչիւն քոյ լայնալիճ աղեղան ,
Քաջ զօրավար մամիկոնեան գայլ վահան :

Փող բարձրաձայն որոտացեալ ՚ի Տարօն .
Վարատեցեր զթշնամին ՚ի Յրօն
Ընդէր լռես ո՞վ գիւցազուն բարեկրօն .
Քաջ զօրավար մամիկոնեան գայլ վահան :

Պեա բոցեղէն բղխեալ յաշխարհ Հայաստան ,
Ծաւալեցար որպէս զհուր յեղեգան .
Հարեր ՚ի մահ զիշխան զօրուն զՄիհրան .
Քաջ զօրավար մամիկոնեան գայլ վահան :

Քաջաց ճենաց քաջ զօրավար բարեկիր ,
Խոհեմ արի անպարտելի մարտադիր ,
Որով հարեր զիշխան զօրուն զՎարչիր .
Քաջ զօրավար մամիկոնեան գայլ վահան :
Ոհն ՚ի Բանահիւսից .

ԲՆԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Ո՛ր դու անցաւոր, Հայ երիտասարդ,
Տես Անի մայրաքաղաքս Հայոց,
Նախ շքեղ էի յաշխարհի, իսկ արդէ
Եղէ առարկայ ծաղու անայոց,
Ո՛ր էք դուք, ո՛ր էք դուք, ո՛ր էք դուք
գիւցազունք, Հայոց,

Բնակիչք իմ էին արքայք մեծաշուք,
Այժմ եղեալ են Մաշկաթեք եւ Բուք.
Սրբատաշ հիմունք իմ քաղաքսցան,
Չբխեմ, զիսորդ Հայք իմ չառնեն սուգ :

Այլազգիք տեսեալ զիմա գրութիւն
Տխրին անկանին իսոր տրոմունթիւն.
Իսկ Հայք ո՛չ կամին հարցանել ցաւն իմ,
Ջի կորուսեալ են զազնիւ բնութիւն :

Ի թշուառութեան խիղճն քարանայ,
Նշոյլ զգացման խնայաւ վերանայ.
Անբախտն է ծանայ ամէն մոլորութեանց,
Եւ քարեաց խոտորի, չարեաց տիրանայ :

Ի՞նչ, դու, Սէյադի սրտառուչ ձայնն,
Արտաքսեա՛ս սրտիդ կարծեաց ունայնն.
Լեր հայրենասէր նման այլազգեաց,
Նա՛ է վիճակաց արձակն ու լայնն :

ՊԵՏՐՈՍ Տ. ՅՈՎԱԿԻԱՆ ՄԱԴԱԹԵԱՆՅ
ՀԱՄԱԽԵՅԻ ՍԵՅԵԱԴ ՄԱԿԱՆՈՒԱՆԵԱՆ

Մայիս ամսոյ հանելուին յեր Արգոյ բաժանորդներէն երկու
 զնարեալսք՝ հասնեալք պարսկսն՝ միջան աշխատութեամբ
 լնէլով առ յերէն , որոնց գրչութեանը աշխատութիւնը
 նայելով արժան զարեցաւ միջոցապէս նամակի պիղծման հա-
 րարայել :

ՄԵԾԱՐՈՒ ԽՄԲԱԴԻՐ

Ո՛ր ասպուրական Արծաղդ Մայիս ամսոյ պատուական
 Թերթի միջոցաւ հրատարակուած հանելուկն է (Գիշեր
 եւ Ճրագ) որոյ լուծումն է այս :

Անագգեցիկ ոմն է Ճրագ
 Յորմէ բղխի բոց եւ կայծակ .
 Եթովպացւոց արքայն գիշեր
 Միշտ հալածէ ըզնա յերեր ,
 Որով պարտեալ հրաբուղիս ոգին
 Չտեղի առնու գիշեր մթին .
 Յոր բանականքս թմրեալ 'ի նինջ
 Տամբ տուրնջեան տքնութիւն ջինջ :

Մնամբ միշտ ցանկացող պատուական ամսաթիւթիցդ հայ-
 րենախօս ոսկեփետուր Արծաղն Վասպուրականի :

Խ. ՊՕՂՈՍ ԵՒ ՍԱՀԱԿ

նախկին աշակերտք

ՏԻՐԱՎԱՌՈՅՑ ՎԱՐԺԱՐԱՆԻ

1859

'ի Վան քաղաքի .

ՀԱՆԵԼՈՒԿ

Եմ խողովակ երկայն եւ նեղ
 Ճարտարութիւն վեհ Հեփեստին.
 Շանթ եւ կայծակ են իմ որդիք
 Բումբիւն դղորդ տամ եւ երեք
 Թէպէտ շնչիկ չիք իմ փորին
 Բայց շնչաւորս շանթեմ իմահ,

Արեհ. Յ. Թ. Ա. Ժ. Վ. Վարդ. 44.

Նիւթին սրբագրիչը տպարանէն հեռու տեղ դա-
 ցած ըլլալով, տպագրութեան մէջ աշխարհաբառին վա-
 յելութիւնը կորսնցնող սխալներ եւ տառափախներ ե-
 ղած է, ուստի հարկ համարեցինք ուղղելու.

երես	տող	սխալ	ուղիղ
141.....	2.....	ազգ.....	ազգը
141.....	11.....	կնէին.....	կընէին
142.....	2.....	մասունքներ.....	մասունքները
142.....	15.....	Թմբրութիւն.....	Թմբրութիւնը
142.....	16.....	ապշտութիւն.....	ու ապշտութիւնը
142.....	16.....	էր.....	է
142.....	24.....	բոլոր.....	բոլոր
143.....	1.....	հրապարակելով.....	հրատարակելով

ԱՆՁՆԱՆՈՒԷՐ
ԳՈՐԾԱԿԱԼՔ ԸՆԿԵՐԱԳՐՈՒԹԵԱՆ

ՎԱՆ. Պ. Մկրտիչ Տ. Ատոմեան 'ի գրանոցի վասպուրական
Արծուոյն :

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ , Գրիգոր Աղա Տ. Մկրտիչեան Մա-
լեհոյ :

ԿԱՐԻՆ, Խաչատուր Խան Տ, 'Երսիսեանց եւ միանգամայն
գործակալ Տարօնոյ եւ Ռուսաստանի Հայոց :

ՏՓԻՒՍ. շքեղարուեստ Յովհաննէս Աղա Բաբանեան Բա-
թանեանց :

ՏՐԱՊԷԶՈՆ. Լշաճան Աղա Յովհաննէսեան :

ՊՕԼԻՍ. Պ. Յակովբ Աղուանեան վանցի 'ի Պալթաճի Խան

ՉՄԻՒՌԻՆ. Պ. Սարգիս Տէր Մարգարեան վանանդեցոյ :

ԲԵՐԻԱ. Յովհաննէս Աղա Միսաքեան :

ՍԱԼԱՄԱՍՏ, Յակովբ Մերզայեան Մէլիք Յակովբեանց ,
միանգամայն գործակալ Պարսկաստանի Հայոց :

ԳԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԿԵՐԱԳՐՈՒԹԵԱՆ ԿԱՆԽԻԿ

Ի վան, 'ի Կարին, 'ի Մուշ, 'ի Բաղէշ, 'ի Տրապիզոն 2-
կէս Օսմանցի քսան ղուրուշնոց արծաթ Մէճիաիկ :

Ի Պօլիս , 'ի Չմիւռին , 'ի Բերիա, երեք արծաթ քսան
ղուրուշնոց Մէճիաիկ :

Ի Ռուսաստան եւ 'ի Պարսկաստան , այսինքն 'ի Տփլիս ,
յԱղէքսանդրպօլ , 'ի Վաղարշապատ 'ի Դաւլթէժ եւ այլն .
չորս արծաթ Մանէթ :

Գին միոյ տետրակի 7 ղուրուշ : Ճանապարհին ճախքը
խմբագիրը պիտի վճարէ :

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՀԱՆԴԵՍ ԱՍՏՈՒԱԾՊԱՇՏՈՒԹԵԱՆ

ԵԿԵՂԵՑ ԱՇԷՆ ՀԱՐՑ

Անանիա Շիրիւնի Թեոդորոս խաթեանոր Ե-Մովսէս Խերթոյ Խաջարո-եայ Հաբոր Հայոց : 135

ՀԱՆԴԻՍԱՐԱՆ ՀԱՅՐԵՆԱՇԷՆ ԱՌԱՔԻՆԵԱՑ

Գ. Աշո Կորճաճ Հայրենաշէն արքայ Հայոց : 140

Հանդէս Հարցառնոթեան Ս. Ղ-խանեան վարժարանին որ յայգեպանն լանայ : 143

ՏԵՍԱՐԱՆՔ ՀԱՅՐԵՆԻ ԱՇԽԱՐՀԱՑ

Սարգսնոր Ս. Աստ-ածաթի լան Ե- Հաջանայ Գիւլ : 145

ԲՈՒՐԱՍԱՆ ԲԱՐՈՅԱԿԱՆ

'Ի Կարչ Բերանայ առն' Լյոյի Կիւլ Բար-թեալ : 149

Առաի Աղո-եա Ե- Գայլ : 152

Առաի Հա- Ե- (Թ-չո-ն) : 153

ԹԱՆԴԱՐԱՆ ՀԱՅՊԱԶԵԱՆ ԴՊՈՒԹԵԱՆ

Օրինի գրչագիր Ա-եպարանին Սարգսնորայ վանից : 154

Յիշատիւրան Հո-չանայ Գիւլի գրչագիր Ռ-Ե- Գարանի : 155

Տալ 'Ի Սարգսնոր Ս. Աստ-ածաթի : 156

Տալ 'Ի Ռ-ճապանի լագա-որայ Հայապանի : 157

Քնար Հայապանի : 160

Բայապարոթի-ն Մայիս ամսայ Հանել-լի : 161

Հանել-լի : 162